

10.12.2009

Կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարի նոր օրինագիծ է մշակել  
Մ ա ր գ ի ս Հ ա ր ու թ յ ու ն յ ան

Կոռուպցիայի դեմ պայքարելու համար Հայաստանի կառավարությունը Ազգային ժողով է ներկայացրել մի օրինագիծ՝ ըստ որի ստեղծվելու է էլեկտրոնային միասնական ռեգիստր, որտեղ հանրապետության 500 բարձրաստիճան պաշտոնատար անձինք պետք է ներկայացնեն իրենց անհատական հայտարարագրերը: Ռեգիստրը բաց է լինելու յուրաքանչյուրի համար, իսկ այդ պաշտոնյաների գործունեությանը հետեւելու է հատուկ հանձնաժողովը՝ բաղկացած, ինչպես վարչապետն ասաց՝ «հանրապետությունում հեղինակություն վայելող անձանցից»:  
«Օրենքի խստագույն պահանջը լինելու է այն, որ վերջապես իրացնենք սահմանադրական այն նորմը, որ պատգամավորները, նախարարները իրավունք չունեն զբաղվել բիզնեսով», - ասաց վարչապետ Տիգրան Մարգարյանը դեկտեմբերի 9-ին՝ կոռուպցիայի դեմ պայքարի օրվան նվիրված համաժողովում:

Transparency International հակակոռուպցիոն կենտրոնի նախագահ Ամալյա Կոստանյանը կարծում է, որ՝ «մեկ այլ հանրային խորհուրդ ստեղծելու անհարժեշտություն չկա»:

«Կոռուպցիայի դեմ պայքարը մի երկրում, որտեղ այն համատարած է, հանրության ներկայացուցիչների կողմից չի կարող ոչ հաղթահարվել, ոչ էլ պրոֆեսիոնալ ձեռով վերահսկվել», - «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում ասաց նա:

Նոյեմբերի 17-ին հրապարակված Transparency International-ի զեկույցի համաձայն՝ Հայաստանը շարունակում է մնալ աշխարհի ամենակոռումպացված երկրների շարքում: Ըստ այդ հետազոտության՝ Հայաստանի քաղաքացիների 62%-ը անարդյունավետ է համարել կոռուպցիայի դեմ իշխանությունների պայքարը, չնայած երկրում իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունների: